# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ.Ս.ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹԵԱՄԲ

Թանկագին ընկերներ:

Հանգամանքները ստիպում են դիմել ձեզ:

Ինչպէս գիտէք, վերջին օրերին Երեւանում, օփերային թատրոնի հրապարակում տեղի են ունենում միթինգներ ի պաշտպանութիւն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչութեան՝ Սովետական Հայաստանի կազմի մէջ մտնելու խնդրանքի: Այդ հարցի առթիւ միթինգներում ընդունուել են հանրապետական եւ միութենական ղեկավար օրգաններին հասցէագրուած դիմումներ:

Լեռնային Ղարաբաղի շուրջ ներկայումս ըստեղծուած իրադրութիւնը կրում է քաղաքական բնոյթ: Դրա նկատմամբ մակերեսային մօտեցումը կարող է մեծ վնաս հասցնել ազգամիջեան յարաբերութիւններին, ժողովուրդների բարեկամութեանը: Առաջացած իրավիճակը հարուցում է մտահոգութիւն, մեզանից պահանջում բարձր պատասխանատուութիւն, վճռական միջոցների ձեռնարկում, այնպիսի իրադարձութիւնների զարգացման կանխում, որոնք կարող են հասցնել չկանխատեսուած եւ անգամ դժուար ուղղելի հետեւանքների:

ՍՄԿԿ Կենտկոմը համակողմանիօրէն քննարկել է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձութիւնները: Այդ ռեգիոնում գոյութիւն ունեցող ազգային-տերիտորեալ կառուցուածքի վերանայմանն ուղղուած գործողութիւններն ու պահանջները հակասում են Հայկական ՍՍՀ եւ Ատրպէյճանական ՍՍՀ աշխատաւորների շահերին:

Մեզ յանձնարարուած է ձեռնարկել իրադրութեան առողջացման կոորդինացուած միջոցառումներ:

Անհրաժեշտ է անել ամէն ինչ կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի առաջադրած պատասխանատու խնդիրը իրականացնելու համար, քաղաքական եւ գաղափարախօսական ազդեցութեան բոլոր միջոցներն ուղղել Լենինեան ազգային քաղաքականութեան, արդի փուլում դրա էութեան պարզաբանմանը: Այդ ամբողջ աշխատանքում մենք պէտք է ելնենք այն բանից, որ ազգային հարցը պահանջում է ազգային առանձնայատկութիւնների, հոգեբանութեան, աշխատաւորների կենսական շահերի նկատմամբ մշտական եւ սեւեռուն ուշադրութիւն:

Մեր կուսակցութիւնը բացառիկ կարեւոր նշանակութիւն է տալիս արդի փուլում ազգային յարաբերութիւնների զարգացմանը: ՍՄԿԿ Կենտկոմի առաջիկայ պլենումներից մէկը յատկապէս կը նուիրուի ազգային քաղաքականութեան պրոբլեմներին: Ինչպէս Կենտկոմի այս տարուայ Փետրուարեան պլենումում նշեց Ընկեր Մ.Ս.Գորպաչեւը, «Մենք այսօր խօսում ենք երկրի բոլոր ազգերի ու ազգութիւնների ազգային ինքնագիտակցութեան աճի մասին, ազգային զգացմունքների դրսեւորման մասին (որ երբեմն ի յայտ են գալիս խեղաթիւրուած տեսքով): Այս բոլորը կենդանի հարցեր են եւ դրանք պէտք է լուծել»:

Կը ցանկանայի ձեզ տեղեակ պահել, որ Ատրպէյճանի եւ Հայաստանի Կոմկուսների Կենտրոնական Կոմիտեներին, հանրապետութիւնների Մինիստրների Խորհուրդներին յանձնարարուած է մշակել Սոցիալ-տնտեսական բնոյթի անհրաժեշտ միջոցներ Լեռնային Ղարաբաղում իրականացնելու համար:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը դիմում է հանրապետութեան աշխատաւորական կոլեկտիւներին, նրանց կուսակցական կազմակերպութիւններին, բոլոր կոմունիստներին, աշխատաւորներին, մեր երիտասարդութեանը եւ կոչ անում ցուցաբերել քաղաքական ու քաղաքացիական բարձր գիտակցականութիւն: Ժողովուրդների բարեկամութիւնը մեր անգին հարստութիւնն է, Սովետական եղբայր ժողովուրդների միասնական ընտանիքում հայ ժողովրդի հետագայ բարգաւաճման երաշխիքը: Եւ մենք պէտք է այն աչքի լոյսի պէս պահպանենք յանուն սոցիալիստական հայրենիքի բարօրութեան, մեր անդուլ աշխատանքով ամրապնդենք այդ բարեկամութիւնը, այն հարստացնենք հայրենանուէր նոր գործերով:

Մեր ժողովրդի պատմութեան մէջ եղել է հերոսականը, եւ ողբերգականը: Մեր ժողովրդի պատմութիւնը հարուստ է Անդրկովկասի ժողովուրդների, մեր մեծ հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ իսկական ինտերնացիոնալիզմի, եղբայրութեան, փոխադարձ յարգանքի, բարի դրացիութեան եւ համագործակցութեան վառ էջերով: Մեր ժողովրդի պատմութիւնը հարուստ է յեղափոխական, մարտական եւ աշխատանքային փառապանծ աւանդոյթներով:

Դա մեր հոգեւոր անանց հարստութիւնն է, եւ այժմ, այս պատասխանատու օրերին մեր հայրենասիրական պարտքն է թոյլ չտալ անխոհեմ քայլեր, որոնք կարող են սասանել այս ամէնը:

Մենք մէկ անգամ եւս դիմում ենք Սովետական Հայաստանի քաղաքացիներին. այս պատասխանատու պահին հանդէս բերել արիութիւն, ինքնազսպում, զգոնութիւն, քաղաքական հասունութիւն, բարձր կազմակերպուածութիւն եւ աւելի ակտիւօրէն ձեռնամուխ լինել մեր հասարակական կեանքի բոլոր կողմերի վերակառուցմանն սովետական ժողովուրդների ինտերնացիոնալական-եղբայրութեան ամրապնդման աշխատանքին: